

# —≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻԶ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1952

≡ ՅՈՒՆԻՍ ≡

ԹԻԻ 6

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ ԵՒ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին միասնական եկեղեցի է թէ իր կազմակերպչական գրուածքով և թէ բարոյական—գաղափարական բարձր սկզբունքով: Միասնականութեան այդ գաղափարը բխում է քրիստոնէական վարդապետութեան էութիւնից: Փրկչի մեզ աւանդած իւրաքանչիւր խօսքի մէջ սիրոյ, միասնականութեան և համերաշխութեան պատուիրանն է խտացուած:

Հայոց փոքրիկ բայց հնազոյն եկեղեցին, իր որդեգրած գիտակից միասնականութեան գաղափարին է ամենից շատ պարտական, որ կարողացել է տանեակ դարեր շարունակ դիմանալ անցեալի չարադէտ փոթորիկներին, դիմադրել ներքին և արտաքին պառակտողական ուժերին և յարատեւել վաղ քրիստոնէական անաղարտ և հարազատ նկարագրով: Ճիշտ է, մեր եկեղեցու պատմութեան մէջ եղել են մոլի, փառասէր անձինք, որոնք ճգճիմ եսասիրութեամբ տարուած, փորձել են եկեղեցական այս կամ այն հատուածը շեղել միասնականութեան ճշմարիտ ուղուց, սակայն հասարակական կարծիքը և գիտակից ու պարտաճանաչ հողեւորական ընտրանին իրենց վճռական խօսքն են ասել և փառասէր այդ անձանց փորձերն ապարդիւն են անցել:

Միասնականութեան և համերաշխ գործակցութեան ոգով են համակուած եղել Հայոց եկեղեցու բոլոր եկեղեցականները, բոլոր թեմերը, պատրիարքաբանները և կաթողիկոսական աթոռները: Մեր եկեղեցու բազմերախտ և հեղինակաւոր գործիչները միշտ էլ սատարել են միասնականութեան վեհ գաղափարին ու շեշտել այն: Միասնականութեան և համերաշխ գործակցութեան գաղափարի օրինակելի կիրառումը մենք տեսնում ենք, առանձնապէս, Ամենայն Հայոց Հայրապետութեան և Մեծի Տանն Կլիկիոյ Կաթողիկոսութեան փոխարարեութիւններին միջև:

Սկսած այն օրից, երբ առաջացաւ Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը, և Ամենայն Հայոց Հայրապետութիւնը վերահաստատուեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, միասնականութեան զաղափարը հայ եկեղեցիներում ո՛չ միայն չի թուլացաւ, այլ աւելի շեշտուեց: Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի զուգահեռ զոյութիւնը չզիտուեց՝ որպէս հակաթոռ Ամենայն Հայոց Հայրապետութեանը այլ նրա անբաժանելի, օրգանական մասը:

Եւ երկու աթոռների միջև հաստատուեցին շատ սերտ և մտերմական յարաբերութիւններ:

Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի զոյութիւնը ոչ թէ թուլացրեց, այլ աւելի քան ուժեղացրեց տարագիր հայութեան շրջանում վաղուց արմատացած այն հաւատքը, որ Ս. Էջմիածինն է հանդիսանում այն լուսաւոր խարխաբը, որ հայրենասէր հայութիւնը կապում է իր հայրենի սրբութիւնների հետ: Արդարացի է մեր պատմագիրներից Առաքել Դավրիժեցին նշել, որ «ի վերայ Ալոյն և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»: Այդ հաւատքի հիման վրայ է ստեղծուել ազգային այն աւանդութիւնը, որ քառագագաթ Արաղածի բարձունքին հայ ժողովրդի մշտավառ կանթեղն է կախուած, որի մէջ վառուող իւրը սրբի արցունքներէն են, Հայ հաւատացեալ ժողովրդի սրտում միշտ վառ է մտցել իր որդիական սէրը դէպի Ս. Էջմիածինը, իսկ որդեսէր մայրը արել է հնարաւոր ամէն ինչ՝ վառ պահելու իր զաւակների յոյսն ու հաւատքը:

Հաւատացեալ ժողովրդի այս հաւատքի հարազատ թարգմանն է հանդիսացել հայ հոգևորականութիւնը: Հայ եկեղեցական բոլոր թեմերը և կաթողիկոսական աթոռները անխափր ընդունել են Ս. Էջմիածնի զերագահութիւնը, ենթարկուել են ազգային-եկեղեցական ժողովների որոշումներին, իսկ հասարակական և դաւանական կարևոր հարցերում միշտ էլ ակնկալել են Ամենայն Հայոց Հայրապետութեան հրահանգները: Եւ Էջմիածինը չի թերացել իր գործադուլ մօր դերը կատարել իր որդիների նկատմամբ: Տեղին է այստեղ յիշել Տիրոջ խօսքերը. «Յո՞ ոք ի ձէն՞ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկան օ՞ձ տայցէ նմա: Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա»:

Եղել են, իհարկէ, Կիլիկիայի և Էջմիածնի զահակալների մէջ առանձին և ոչ հեռատես ու շրջահայեաց անձինք, որոնք առաջնորդուել են ոչ այնքան Հայ եկեղեցու ընդհանուր շահերով, որքան իրենց անձնական փառքով, սակայն դրանք միայն առանձին անհատներ են եղել և անկարող են զանուել ամենափոքր իսկ շափով փոխել միասնականութեան և համբերաշխ գործակցութեան բնական ընթացքը:

Ս. Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսական աթոռների միջև զոյութիւն ունեցող յարաբերութիւններն աւելի անկեղծ և սերտ բնոյթ ստացան վերջին յիսնամեակում: Այդ ուղղութեամբ մեծ գործ են կատարել առանձնապէս մեծանուն երկու հայրենասէր զահակալներ՝ Խրիմեան Հայրիկը և Սահակ Բ. Կաթողիկոս Խապանանը: Այդ երկու լուսամիտ հայրապետների սկսած շնորհակալ գործը շարունակեցին Բարզէն աթոռակից և Խորէն կաթողիկոսները: Այդ յարաբերութիւններն իրենց բարձրագոյն աստիճանին հասան ներկայիս Ամենայն Հայոց եռամեծ Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ.ի և Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեղին



Ա.ի օրոք: Ս. Էլմիաճնում հայրենասիրական և եկեղեցական լաւագոյն աւանդութիւններով դաստիարակուած, զազախարապէս կոմիուած և հայ ժողովրդին անձնուրաց ծառայելու պատրաստ այս երկու մեծ հովուապետները արել և անում են իրենց կարելիութեան գերազոյնը: Նրանց ամբողջ ջանքն ու աշխատանքն է եղել, որպէսզի անխախտ և անազարտ պահուէ Հայաստանեայց Առաքելական ինքնանկախ Ս. Եկեղեցին: Որպէս հայրենասէր հոգևորականներ, նրանց տարիների մագթանքն է եղել, որ աւելի ծաղիկ և բարգաւաճի իրենց նուիրական Հայրենիքը՝ և աշխարհի հեռուոր ծայրերում ցրուած հայութիւնը վերագաճայ Մայր Հայրենիքի զիրկը:

Թէ ինչպիսի անկեղծ և սերտ համագործակցութեան ողի են ցուցաբերել այդ երկու լուսամիտ հայրապետները՝ կարելի է դատել հետևեալ փաստերից: — Երբ Ս. Էլմիաճնում զուամրուեց 1945 թուի Ազգային-Եկեղեցական փողովը և օրակարգում գրուած էր Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան հարցը, նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը իր թեմերի պատգամաւորներով միասին մասնակցեց ընտրութեանը, ինքն անձամբ նախագահեց ժողովներին և բարձր զնահատականով առաջադրեց իր սրտակից ընկերոջ թեկնածութիւնը: Իսկ 1948 թուին երբ տօնուեց Գարեգին Կաթողիկոսի ութսունամեայ յոբելեանը, Ամենայն Հայոց Հայրապետը իր զործօն մասնակցութիւնը բերեց յոբելեանին, յատուկ կոնդակ գրեց այդ առթիւ՝ զրուատելով Գարեգին Կաթողիկոսի մեծագոյն արժանիքները. «Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանը, — կարգում ենք Վեհափառ Հայրապետի կոնդակում, — Հայ Եկեղեցու եզակի գէմբերից մէկն է հանդիսանում, եզակի իր եկեղեցաշինարարական հայրենասիրական, զրական-զիտական գործունէութեամբ: Նրա անունը ծանօթ է ոչ միայն Հայրենիքին ու հայկական գրեթէ բոլոր դաղութներին, այլև օտարազգի հասարակական և զիտական շրջաններին: Որպէս առաքինի ու շիտակ եկեղեցական, որպէս առողջ մտքի ու լայն սրտի տէր անձնաւորութիւն, նա վայելում է ոչ միայն հայերի, այլև բարեկամ ժողովուրդների սէրն ու համակրանքը: Մեծ է նրա աւանդը Հայ Եկեղեցու բարգաւաճման և հայ արուեստի, մշակոյթի, պատմութեան ուսումնասիրութեան գործում»:

Այդ բոլորից յետոյ, հասկնալի է, թէ որքան մեծ վիշտ պատճառեց նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսին, երբ Անթիլիասի Կաթողիկոսարանից հեռագիր ստացուեց, որ Տ. Տ. Գարեգին Ա. շնորհապարզ Կաթողիկոսը հիւանդացել ընկել է մահիճ: Այդ լուրն ստացուելուց անմիջապէս յետոյ, Վեհափառ Հայրապետը կարգադրեց միաբանութեանը աղօթք մատուցանել Մայր Տաճարում Գարեգին Կաթողիկոսի առողջութեան համար և ինքը քաջալերական հեռագիր ուղարկեց Անթիլիասի միաբանութեանը: Սակայն յետագայում, երբ Ամենայն Հայոց Հայրապետը տեղեկացաւ, որ Գարեգին Կաթողիկոսի հիւանդութիւնից ապաքինումը դանդաղ է ընթանում, անհրաժեշտ համարեց յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Անթիլիաս, պատգամաւորութեան կազմում նըշանակելով Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանեանին և հայագէտ պրոֆէսոր-քոկտոր Աշոտ Արրահամեանին:

Ամենայն Հայոց Հայրապետի հրահանգով պատգամաւորութիւնը մեկնել է Անթիլիաս և արժանացել նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողի-

կոսի բացառիկ գոհունակութեանը և յարգանքին: Գարեգին Կաթողիկոսը շատ բարձր է գնահատել իր հոգևոր եղբոր բացառիկ ուշադրութիւնը իր նկատմամբ և ժողովրդի ու միաբանութեան ներկայութեան յուզմունքով յայտարարել է. «Աստուած կեանք տայ, երկա՛ր կեանք մեր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորդ Զ.ին, որ եղբայրական շնորհք, օրհնութիւն ցոյց տուեց: Նա իր եղբորը հիւանդտեսս—պատգամաւոր է ուղարկել... սա մեր պատմութեան մէջ շտեմնուած երևոյթ է»:

Պատգամաւորութիւնը ամիս ու կէս Անթիլիասում գտնուած ժամանակ, բացառիկ սիրով է ընդունուել Անթիլիասի միաբանութեան կողմից, որ բոլոր տեսակ դիւրութիւններ է ստեղծուել նրա համար, հիւրասիրել է, մեծարել: Միաբանութեան պատգամաւորութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարազատ արտայայտութիւնն է պատգամաւորութեան Անթիլիաս ժամանման կապակցութեամբ գերաշնորհ Տ. Գերեհնիկ եպիսկոպոսի հետևեալ յայտարարութիւնը. «Ուրախ ենք այսօր Ձեզ մեր յարկի տակ ընդունելու համար: Մէկ է մեր եկեղեցին, մէկ են մեր աթոռները, բոլորս մէկ ենք հոգիով և սրտով: Ձեր ներկայութիւնն աւելի կը զօրացնէ մեր միութիւնը: Ձեզմէ կ'առնենք մեր կարօտը վսեմական Արարատէն, յաւերժական Ս. Էջմիածնէն և անմահական Հայրենիքէն»: Անչափ բարեկամական վերաբերմունք են ցոյց տուել տեղի հայկական թերթերն ու ամսագրերը՝ «Հասկ»ը, «Զարթօնք»ը, «Արարատ»ը և ուրիշները:

Լիբանանի բազմահազար հայութիւնը, որը պատգամաւորութեան Անթիլիասում գտնուած օրերին ուխտատեղի է դարձրել Անթիլիասը, խանդավառութեամբ է ընդունել պատգամաւորութիւնը: Բազմաթիւ հայրենակարօտ հայրենասէրներ եկել և հետաքրքրուել են Հայրենիքով, Մայր Աթոռով, հայրենազարձ բարեկամներով:

Պատգամաւորութիւնը ի տես այդ ամէնի, վերադարձել է անչափ խանդավառուած:

Ամենայն Հայոց Հայրապետի ներկայ պատգամաւորութեան առաքումը դէպի Անթիլիաս հիւանդտեսի, մի նոր ապացոյց է այն սերտ ու սեռն համագործակցութեան, որ զոյութիւն ունի երկու աթոռների՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջև:

Երկու աթոռների միջև զոյութիւն ունեցող կապը զօդուած է փրկչաւանդ միասնականութեան բարձր գաղափարներով, ամբացուած է այն դարերի ընթացքում որչմիտ ձգտումներով և այժմ միս և արիւն է դարձել ամէն մի հայրենասէր և էջմիածնասէր հաւատացեալի մօտ: Կասկած լինել չի կարող, որ գնալով այդ կապը աւելի պիտի սերտանայ և արդիւնաւորուի:

Աստուած առողջութիւն և երկար կեանք տայ մեր երկու հայրապետներին՝ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. շնորհազարդ Կաթողիկոսին և Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գէորդ Զ. Կաթողիկոսին, որոնք մեր եկեղեցու աւանդական սրբութիւնները բծախնդիր պահապաններն ու պաշտպաններն են հանդիսանում:

Աստուած թող հաստատուն պահի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին:

« ԷՋՄԻԱԾԻՆ »